Արտավան

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Ատոմ Վարդանյան

Հեռ. +374 94843899

Արտավան գյուղը գտնվում է ՀՀ Հ Վայոց ձորի մարզում, Արփա գետի ձախակողմյան վտակ Արտավան գետակի ակունքի շրջանում, ծովի մակերևույթից 1880 մ բարձրության վրա: Կլիման ձմռանը ցրտաշունչ է , ամռանը՝ զով: Հեռավորությունը մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից 37կմ է, հանրապետական նշանակության ճանապարհից՝ 9կմ:
Արտավանը փռված է Վայք-Սիսիան խճուղու աջ կողմում, մարզի հարավարևելյան մասում: Հյուսիսից և արևելքից սահմանակից է Սարավանին, արևելքից՝ Սյունիքի մարզին, հարավ-արևելքից՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից և հարավ-արևմուտքից՝ Գոմքին, արևմուտքից՝ Զառիթափին, հյուսիս-արևմուտքից և հյուսիսից՝ Գնդեվազ գյուղական բնակավայրին:

Գյուղը նախկինում կրել է Ագխաչ անվանումը և ընդգրկված է եղել Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառում: Ըստ Ղևոնդ Ալիշանի գյուղը նախկինում եղել է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ճահճուկ գավառի Աղբերախաչ գյուղը:

Բնակավայրը 10-18-րդ դարերում ունեցել է տարբեր բնակատեղիներ՝ Դարբնի, Լուսաբեր, Ջուլ, Դամբարանադա\տ անվանումներով: Այս բնակատեղիներից մի քանիսի մասին որոշ տեղեկություններ կան Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի (Քաջբերանի) < Ճանապարհորդական նկատողություններ > գրքում (1870-ական թվականներ):

Մինչև 1949 թվականը գյուղը կոչվել է Ջուլ, որը համապատասխանում է գյուղի այժմյան տարածքին: Բնակչությունը ռուս- պարսկական պատերազմի տարիներին ներգաղթել է Խոյ, Սալմաստ գավառներից, նախ բնակվել է Ագխաչ գյուղում, ապա այնտեղից տեղափոխվել և վերաբնակվել Ջուլում:
Գյուղը վերաբնակեցվել է նաև 1949թ. ու վերանվանվել՝ Արտավան:
Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղին:
Գյուղում գործում է միջնակարգ դպրոց, բուժկետ, կապի հանգույց: Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:
ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Արտավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է 13 հուշարձան: